№ 168 Սեպտեմբերի 10 (22) 1881 Սեպտեմբերի 10 (22) № 168

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Ստորագրողներին գինում են ուղարկել։

Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի եւ տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Առողջապահական թերթ» Երեւանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հնագիտական ժողով Թիֆլիսում. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Նամակ խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. «Հայրենիք» լրագրի յօդուած. Թիւրքիա. Ֆրանսիա. Անգլիա. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայոց թատրոն.

„ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ“ ԵՐԵՒԱՆՈՒՄ

—

Շնորհակալութեամբ ստացանք բժիշկ Լեւոն Տիգրանեանի խմբագրութեամբ Երեւանում հրատարակվող „Առողջապահական թերթի“ առաջին համարը։

Նախ և առաջ տետրակի արտաքին տեսքը գրաւիչ և գուրեկան տպաւորութիւն է անում։ Բայց արինք տետրակը, սկսեցինք կարդալ առաջնորդող յօդուածը առողջապահութեան մասին և անկասելի կերպով կարդացինք ամբողջ համարը մինչև վերջը մեծ և մեծ բաւականութեամբ։ Նիւթը հետաքրքրական և օգտաւէտ է, լեզուն հասկանալի, ոճը թեթև և ժողովրդական։ Բժիշկ Տիգրանեան իր այդ հրատարակութեամբ, եթէ նա շատ տարածվի մեր ժողովրդի մէջ, անպիտի օգուտ կարող է տալ հայերին, տարածելով նրանց մէջ առողջապահութեան վերաբերութեամբ ճիշդ և առողջ մտքեր։ Բժիշկ Տիգրանեանը իր այդ ձեռնարկութեամբ տպացուցեց որ միայն այնպիսի գործ կարող է աջողվել մեզանից իւրաքանչիւրին, որին մենք հմուտ ենք, որ մեր ոյժից բարձր չէ, մեր սովորածի շրջանից դուրս չէ։

Բայց դժբաղդաբար մեզանում շատ անգամ մարդիկ ձեռք են տալիս այնպիսի գործերին, որոնց կատարելը անկարող են։ Քաղաքական գիտութիւնը չը սովորած մարդ քաղաքական թերթ է հրատարակում, մանկավարժութիւն չիմացող մարդ մանկավարժական դասագրքեր է հրատարակում, և այլն։ Ի՞նչ կը լիներ եթէ մի մարդ, որ բժիշկ չէ, որ գուցէ քաղաքական գիտութիւններ է սովորել, յանձն առներ հրատարակել մի առողջապահական ամսագիր, և այլն։

Բայց մեզանում ոչինչ բանի վրա կրիտիկ, քննադատութիւն անել չէ կարելի։ Մի մարդ դաւառական թերթի է հրատարակում, նրան ցոյց ես տալիս թէ ինչ պէտք է լինի դաւառական լրագրի նպատակը, ինչ պէտք է լինի նրա պրոգրամը,—քեզ պատասխանում են հայհոյանքով, փոխանակ ըմբռնելու քո ասածը, փոխանակ քո դասողութիւններին, դասողութիւններով պատասխանելու։ Մէկի թարգմանութեան վրա ես գրում,—պատասխանի տեղ սկսում են հայհոյել քո անձնական կեանքը։ Մի-սի մանկավարժական դասագրքի վրա փոքրիկ քննութիւն ես անում, ասում ես թէ այդ կը նշանակէ մոլորեցնել երեխաներին, հաւատացնելով նրանց որ ծիրանը և խիարը կամաց կամաց օգոստոս ամսին են հասնում, այն ինչ մեր երկրում օգոստոս ամսին ոչ ծիրանի, ոչ էլ խիարի հոտն էլ չը կայ, այլ նրանք հասնում են մայիսին և յունիսին արդէն,—և ահա ստանում ես ինքնահաւան, կոպիտ, անտանձ պատասխան։

Մեզանում ամեն բան կաջողվի միայն այն ժամանակ, երբ ամեն մարդ յանձն կառնի միայն այն գործի կատարելը, որին ինքն տեղեակ է։

Մենք հաւատացած ենք որ բժիշկ Տիգրանեանի գործը կաջողվի, որովհետև նա յանձն է առել այնպիսի գործ, որին ճշմարիտ տեղեակ է։

Շնորհաւորում ենք բժիշկ Լեւոն Տիգրանեանին իր սկսած գեղեցիկ գործի համար և խորհուրդ ենք տալիս հայ հասարակութեանը շատ զբվել „Առողջապահական թերթի“ միամեայ հանդիսին։

Առաջին տետրակի մէջ իրանց վրա զըլխաւոր ուշադրութիւնը դարձնում են առաջնորդող յօդուածը և բժշկի գեղեցիկ խօսակցութիւնները հիւանդների հետ։

Կատարեալ աջողութիւն ենք ցանկանում «Առողջապահական թերթին»։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԹԻՖԼԻՍՈՒՄ

—

Սեպտեմբերի 8-ին ներկայ գտնվեցանք հնագիտական ժողովի առաջին նիստին։ Կովկասեան երկիրը բաղդաւոր է, որ կարող է ոգնել այդ ժողովի կայանալը իր մայրաքաղաքի մէջ։ Այդ մասին շատ է խօսվել և դեռ էլ շատ կը խօսվի։

Երկրագնիս զանազան ծայրերից գիտնական մարդիկ ժողովված են Թիֆլիսի մէջ, մեր ընտիր հասարակութեան ներկայութեամբ, փոխադարձի պայմանում, մեր երկիրը ուսումնասիրելու և նրա հնութիւնների հետազօտութեամբ զբաղվելու նպատակով։ Սիրելի էր մեզ լսել կովկասեան հնութիւնների, հայ և վրաց ազգի հին պատմութեան նշանակութեան մասին ճառելիս հռչակաւոր ռուս գիտնական պատմաբան Լազարեվին, ուսումնական հնախօս կոմս Ուվարովին և ուսումնական գեներալ կամարովին։ Մեր գիտնականները կը խօսեն յետագայ նիստերում։

Ուրախալի էր շատ տեսնել, որ հայոց եկեղեցու ղլուխը, վեհափառ Կաթողիկոսը, հասկանալով ներկայ ժողովի մեծ նշանակութիւնը, կամեցաւ պատուել ժողովը, իր համակրութիւնը ցոյց տալով նրան և ուղարկեց Էջմիածնի կողմից մի պատգամաւոր ժողովին ներկայ գտնվելու համար։ Պատգամաւորի ընտրութիւնն էլ շատ աջող էր վեհափառի կողմից։ ուղարկվածը Խարէն վարդապետ Ստեփանէն է, որ իրրև լուսաւորված համալսարանական մարդ, իրրև պատմաբան, պարզելու կանէ Էջմիածինը, ում հետ և կը խօսի։

Միքայէլ Սաղաթելեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 7 սեպտեմբերի

Պատուական «Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ ներկայ տարվայ սկզբում, պ. Ադամի Մէլիք-Աշվանովը մի քանի պարոնների մասնակցութեամբ, կամենում էր Հաւլաբարում մի «ընթերցարան» բանալ, որը ինձ անչայտ պատճառներով մինչև այժմ դեռ չէ բացվել։ Ընթերցարանին տարեկան բաժանորդ գրվեցան պ. պ. Մանվան Զորանց 5 բուբլի, իսկ Արտէմ Մակարեանցը 3 բուբլի։ Եւ այդ փողերը մինչև այժմ ինձ մօտ էին. տեսնելով որ «Ընթերցարանը» առ այժմ չէ բացվում, նուէրատու պարոնների հաւանութեամբ, ահա ուղարկում եմ «Մշակիդ» վերոյիշեալ ութ բուբլին, ինդրում եմ որ հասցնէք Վիէննայում հրատարակվող հայոց օրգան «Journal d'Orient» լրագրի խմբագրութեան։

Ղազարոս քահանայ Յովսէփեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Շուշի, 28 օգոստոսի

Վերջին ժամանակներս մեր պարբերական հրատարակութիւնների, մասնաւոր «Մշակի» լրագրի մէջ իբրև լուր տարածվում է, որ Ղարաբաղի թեմական հոգեոր դպրանոցը կործանվելու վրա է, ուսուցչական խումբը, որ անցեալ տարի պ. Ս. Մանդինեանի տեսչութեան ներքոյ գործում էր, ցրվելու վրա է։ Այս լուրերը զարմանալի յամառութեամբ յարատեւում են մինչև անգամ քաղաքիս մէջ և տարածվում են գլխաւորապէս մի քանի պարոնների կողմից, որոնց իրենց առանձին շահերն ունեն, որ ուսումնարանը ճշմարտի փակվի, ուստի և ամենայն կերպով աշխատում են յուզել և գրգռել ժողովուրդը, որպէս զի իրանց նպատակին հասնեն։

Իբրև տեսուչ Ղարաբաղի ազգային երկսեռ հոգեոր դպրոցների, ես սրբազան պարտաւորութիւն եմ համարում հաւատացնել Շուշի քաղաքի բնակիչներին և օտարաքաղաքացի Համազգիներին, որ թէև պ. Ս. Մանդինեան այս տարի թողեց տեսչական պաշտօնը, հրաւիրվելով Էջմիածնի ճեմարանը, բայց նրա հրաժարումը ամենեին չէ կարող դպրոցի յետադիմութեան և փակման պատճառ լինել գլխաւորապէս այն պատճառով, որ ինձ, նոր տեսչին, արդէն յայտնվել է կազմել մի ուսուցչական խումբ, որի անդամները բոլորը անցեալ տարվայ ուսուցիչ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

—

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

—

Սեպտեմբերի 7-ին Թիֆլիսի հայոց թատրօնական խումբը ներկայացրեց Պալմի թատրօնում «Կամնիլուարդ տիկին» Ալէքս. Դիւմայի պիէսան, որ ամեն լեզուով թարգմանած է և որից փոխադրված է երեւելի «Տրավիատա» օպերան։

Մարգարիտա Գօթիէի դերը խաղում էր տիկին Հրաչեան։

Մենք տեսանք այդ դերի մէջ Ֆրանսիայում և Գերմանիայում շատ և շատ հռչակաւոր դերասանուհիներ, տեսանք և «Տրավիատա» օպերայի նոյն դերում երգչուհիներ, որոնք երգեցողութեան հետ միացնում էին դրամատիկական բարձր արհեստը, ընտիր խաղը, տեսանք վերջապէս Մոսկվայում տիկին Սավինային, Թիֆլիսում տ. Բալֆին։ Եթէ սրանց բոլորի հետ պէտք է համեմատենք տիկին Հրաչեանին ու նրա խաղի մասին դատելով չը հրաժարվենք մեր անցեալ տպաւորութիւններից, այն ժամանակ անշուշտ պէտք է ասենք, որ Հրաչեան բոլորովին չէ խաղում Մարգարիտա Գօթիէի դերը, այլ մի որ և է ուրիշ անձնաւորութիւն է ներկայացնում։

Բայց դատելով նրա մասին, որպէս հայ դերասանուհու մասին, ոչինչ համեմատութիւններ չանելով, կարող ենք ասել որ նա լաւ է խաղում։

Թղմմաւոր և անկողմնապահ թատրօնական քննադատութիւնը չը պէտք է ոչ բարձրացնի մի արհեստագէտին մինչև երկինք, ոչ էլ ստորացնի նրան։ Պէտք է բոլոր հանգամանքները հաշվի առնել և աչքատել ցոյց տալ այն պակասութիւնները, որոնց վրա ուշադրութիւն դարձնելով ինքն դերասանը կարող է ուղղվել։

Մարգարիտա մի ընկած, անբարոյական կեանք վարող երիտասարդ կին է։ Ցանկարծ իր սովորական փչացած շրջանում նա հանդիպում է մի երիտասարդին, Արման Դիւվալին, որ նրան սիրում է։ Ընկած կինը առաջին անգամ զգում է որ կարող է սիրել, վերջապէս և սիրում է մաքուր, անվերջանալի սիրով։ Պարզ է որ այդ բարոյական փոխում, երկրորդ գործողութեան մէջ, կատարվում է երիտասարդ կնոջ մէջ մի բարոյական ցնցվածքի և հիմնական յեղափոխութիւն։ Դա առաջին հոգեբանական բօսկն է։ Երկրորդ բօսկն է, երբ ճշմարիտ սիրով սիրող կինը, արդէն փոխադարձ սէրը վայելած և կատարելապէս յեղափոխված լինելով, ստիպված է հանգամանքների շնորհով զոհել իր սէրը, իր սիրած մարդուն փրկելու համար։ Առաջին անգամ կռիւ, պատերազմ իր ազեղ անցեալի դէմ, երկրորդ անգամ կռիւ, պատերազմ իր երջանիկ, պայծառ ներկայի դէմ։ Առաջին անգամ ջանք անել բարձրանալ անդունդից, զժոխքից դէպի երջանկութեան մաքուր սիրոյ դրախտը, երկրորդ անգամ իր սեփական ձեռքերով, վերանձնութեամբ կոտրել իր ստեղծագործած երջանկութիւնը։ Առաջին անգամ հերոսութիւն, երկրորդ անգամ հերոսութիւն։

Մինչև այդ հոգեբանական բարձր բօսկները Հրաչեան ներկայացրեց մեզ, այնպէս ինչպէս հարկն էր։

Անտարակոյս տ. Հրաչեան ունի մեծ արժանաւորութիւններ։ գեղեցիկ դէմք, դլխից մինչև ոտք շնորհալի կազմուածք, հարուստ միմիկա, բազմակողմանի յարժուածքներ,—այո, այդ բոլորը կայ, բայց այդ բաներն չեն և այդ բնական միջոցները չը պէտք է և չար գործածել։ Խաղի հոգեբանական ճիշդ հասկացողութեամբ առաջնորդված չը լինելով, ինչքան էլ բնական բազմակողմանի շնորհներ ունենար դերասանուհին, խաղը վերջ ի վերջոյ կը դառնայ միակողմանի։

Մի կին փչրում է իր ոգեղ անցեալը, նոր կեանք մտնելու համար, նոյն կինը քիչ ժամանակից յետոյ իրան ստիպված է տեսնում իր ստեղծած նոր կեանքն էլ իր ձեռքով փչրելու։ Այդ բոլոր հոգեբանական խոր, անգամ յեղափոխութիւնները չէ կարելի ներկայացնել բարկանալով, նեղանալով, տանջվելով, լաց լինելով, այնպէս, ինչպէս մի կին, որ նազ է անում որ իր կամքը չը կատարեցին, որ նրանից խլում են այս կամ այն առարկայ, որ նրա կամքին հակառակ են գործում։ Ո՞վ չը գիտէ որ գրեթէ ամեն կին ընդունակ է լաց լինել, մինչև անգամ ուշաթափվել, հիանդանալ, եթէ նրա այս կամ այն խօսքը չը կատարեցին, եթէ նրա ամուսինը չը գնեց նրան իր ցանկացած գոհարեղէնը, չը տարաւ նրան թատրօնական ներկայացումը։ Բայց այդ լացի մէջ և Մարգարիտա Գօթիէի տանջված դրութիւնից, հոգեբանական սարսափելի կռուից առաջացած լացի մէջ մեծ զանազանութիւն կայ։

Տիկին Հրաչեայի ձայնի մասին մենք չենք կամենում խօսել։ Մենք հաւատում ենք որ յոգնած